ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

ՀԵՏԱՄՆԱՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ «ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԱՏՈԼԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ» (ՀԱՄՆ) ՇՈՒՐՋ

Հանրապետական Թուրքիայի կազմավորումից հետո թուրքական կառավարողների առջև ծառացավ երկրի արևելյան հետամնաց վիլայեթների զարգացման հարցը (Dogu meselesi կամ dogu sorunu), որի արմատները գալիս էին դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից: Մինչ օրս աշխարհագրական այս տարածաշրջանը շարունակում է դուրս մնալ Թուրքիայի տնտեսական համակարգում շարունակվող սերտաճման գործընթացներից: Հանդիսանալով Թուրքիայի գյուղատնտեսական «մթերանոցը» այս վիլայեթներն արդյունաբերականացման տեսանկյունից շատ թույլ են զարգացած ի համեմատ արևմտյան և կենտրոնական շրջանների: Արևելյան Անատոլիայի սոցիալ–տնտեսական, քաղաքական և ազգային խնդիրներին առնչվող հարցերը էլ ավելի թեժացան Թուրքական Հանրապետության կազմավորումից հետո: «Արևելյան շրջաններ» կոչված այս տարածաշրջանը ներառում է հետևյալ վիլայեթները՝ Աղրի, Ադիյաման, Արդվին, Բինգյոլ, Բիթլիս, Վան, Գազիանթեպ, Գիրեսուն, Գյումուշհանե, Դիարբեքիր, Կարս, Մալաթիա, Մարաշ, Սարդին, Մուշ, Ռիզե, Սըվաս (արևելյան մասը), Սղերդ, Ուրֆա, Հաքյարի, Տբապիզոն, Թունջելի, Էյլազիգ, Էրզինջան, Էրզրում: Դրանց ընդհանուր տարածքը 290,7 հազ. քառ. կմ է, որը կազմում է երկրի ողջ տարածքի 37,3[1]:

Այս շրջանների նկատմամբ առանձնահատուկ ուշադրություն դրսևորվեց հատկապես 1980թ. սեպտեմբերի 12–ի զինվորական հեղաշրջումից հետո: Արևելյան վիլայեթների զարգացման առաջնության դրույթը տեղ գտավ պաշտոնաթող ծովակալ Բ. Ուլուսուի գլխավորած կառավարության ծրագրում[2]: Դրանից առաջ, Թուրքիայի տարածքային անհավասարաչափ զարգացման ցուցանիշները ոչ միայն չհարթեցվեցին, այլ, ընդհակառակը, գնալով այդ տարբերությունն ավելի մեծացավ: 1963–1974թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայի Արևելյան և

Հայկ Դեմոյանը ԵՊՀ պատմության ֆակուլտետի դասախոս է, պատմ գիտությունների թեկնածու:

Հարավարևելյան իլերի բաժինը երկրի արդյունաբերության հավելյալ արժեքի արտադրության ծավալի մեջ նվազեց 7,8 տոկոսով՝ իջնելով մինչև 4 տոկոս[3]: Զինվորական կառավարության ծրագրում նշվում էր, որ «հաշվի առնելով տեղական ռեսուրսները և աշխատուժը՝ կառավարությունը կգործադրի բոլոր ջանքերը, առանձին շրջանների մասշտաբով արդյունաբերական ներուժի ստեղծման համար»[4]: Քաղաքացիական իշխանության վերահաստատումից հետո Օզալի կառավարությունը, ի թիվս այլ հրատապ լուծում պահանջող խնդիրների, իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև հետամնաց վիլայեթների զարգացման հարցերի վրա, որը, բացի զուտ տնտեսական բնույթից նաև կարևոր սոցիալական–քաղաքական խնդիր էր դարձել: Այդ հարցին վարչապետ Թուրգութ Օզալն անդրադարձավ 1983թ. դեկտեմբերի 19–ին Մեջլիսում՝ կառավարության ծրագրի ներկայացման ժամանակ[5]: Առաջին անգամ թուրքական իրականության մեջ պետական նախարարներից մեկին հանձնարարվեց հետամնաց Արևելյան և Հարավարևելյան վիլայեթների զարգացման հարցերի վարույթը:

«Մայր–Հայրենիք» կուսակցության առաջադրած միջոցառումների ծրագիրը նախատեսում էր խրախուսման հատուկ միջոցների կիրառում, ուղղված բնական ռեսուրսների արագացված շահագործմանը և օգտագործմանը, երկրագործության և անասնապահության զարգացմանը, դրանց արտադրանքի գնագոյացման բարելավմանը, ինչպես նաև նախագծեր, որոնք կապահովեին տեղական բնակչության զբաղվածությունը: Նախատեսվում էր նաև էժան և երկարաժամկետ վարկերի տրամադրում, ճանապարհների, դպրոցների, հիվանդանոցների, էներգո և ջրամատակարարման, կապի և սոցիալական նշանակության մյուս ոլորտներում կապիտալ ներդրումների արագացումը: Որոշակի զիջումներ էին նախատեսվում նաև տարածաշրջանի ծառայողներին, մասնավորապես՝ նրանց բնակարանով ապահովելու դեպքում[6]. Կարևոր տեղ էր հատկացվում մասնավոր ներդրումներին, որոնք այս շրջաններում շատ թույլ էին արտահայտված:

Երկար տարիներ Թուրքիայի արևելյան վիլայեթներից դեպի արևմուտք բնակչության ներքին տեղաշարժը բացասաբար էր անդրադառնում արևելյան շրջանների աշխատանքային ռեսուրսների վրա: 1984 թվականի դրությամբ Թուրքիայի բնակչությունը կազմել էր 48.378.714 մարդ: Պետական վիճակագրական ինստիտուտի տվյալները վկայում էին, որ Թուրքիայի մի շարք հեռակա շրջաններում բնակչության տեղաշարժի պատճառով նկատվում է բնակչության նվազում[7]: Տարեցտարի ուժգնացող ոչ հավասար տարածաշրջանային զարգացման հակումները բացառելու և արտադրողական ուժերի տարածքային կառուցվածում գոյություն ունեցող

տարբերությունները վերացնելու համար անհրաժեշտ էր կիրառել հետևյալ միջոցառումները,

ա. մշակել ռացիոնալ տնտեսության և տեխնոլոգիաների ճյուղային համակարգ, որը առավելագույնս կօգտագործեր հետամնաց շրջանների եղած միջոցներն ու պայմանները,

բ. արտադրական և հասարակական ենթակառույցների զարգացում,

գ. բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացում և որակյալ կադրերի պատրաստում,

դ. հետամնաց շրջաններից բնակչության տեղաշարժի կարգավորում,

ե. հետամնաց Արևելքի զարգացման պետական հիմնադրամի ստեղծում,

զ. պետության ներդրումային գործունեության բարելավում, հետամնաց շրջանների զարգացման լրացուցիչ ազդակների ապահովման, մասնավորապես սոցիալական ծրագրերի պետական ֆինանսավորման միջոցով, երկրի տարբեր հատվածների կենսամակարդակների հավասարեցում,

է. զբաղվածության ոլորտում կտրուկ տարբերությունների վերացում, ոչ գյուղատնտեսական ճյուղերում աշխատատեղերի ստեղծում և աճող գործազրկության զսպում[8]:

1987 թ–ին ստեղծվեց Նախընտրելի ենթաշրջանների ներդրումային հոլդինգը, որի հիմնական նպատակը արևելաանատոլիական տարածաշրջանում արդյունաբերական շինարարության ֆինանսավորումն էր: Հետաքրքրական է այն փաստը, որ Օզալի հռչակած համատարած տնտեսական ազատականացման քաղաքականությունը համարյա չէր տարածվում այս շրջանների վրա: Ինքը՝ Թուրգութ Օզալը, այդ առումով նշեց հետևյալը. «Պետության դերը ընկերությունների կազմակերպման և շահագործման ոլորտում ամբողջովին կփոխադրվի ժողովրդին, միակ բացառությամբ, որ Արևելյան և Հարավարևելյան, այսինքն՝ նախընտրելի ենթաշրջաններում պետությունը դեռ կպահպանի իր գերիշխող դիրքերը»[9]: Պետությունը տարածաշրջանային զարգացման ոլորտում մասնակցում էր օրենսդրական գործառնությունների, ներդրումային գործունեության և հովանավորչական միջոցների կիրառմամբ՝ ուղղված հետամնաց շրջաններ մասնավոր սեկտորի ներգրավմանը:[10] Այդ նպատակով պետությունը կիրառում էր ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման, հարկերից և մաքսատուրքերից ազատման և այլ կարգի արտոնություններ:

Երկիրը կառավարողների կողմից հետամնաց և թույլ զարգացած հարավարևելյան վիլայեթների զարգացման ուղղությամբ կիրառվող միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում

«Հարավարևելյան անատոլիական նախագիծը» (կրճ. ՀԱԱՀ, թուրք. Guneydogu Anadolu projesi – GAP): Նման նախագծի իրականացման գաղափարն առաջին անգամ հղացել էր Քեմալ Աթաթյուրքը: 1930–ական թվականներին սկսված հետախուզական աշխատանքները շարունակվեցին 1954թ–ին Պետական հիդրավլիկ աշխատանքների վարչության կողմից, որի կազմում 60–ականներին ստեղծվեցին Եփրատի պլանային վարչությունը և Դիարբեքիրի տարածաշրջանային վարչությունը: Այս երկու վարչությունները նպատակ ունեին հետազոտելու Եփրատ և Տիգրիս գետերի վրա հիդրոկայանների ու ջրամբարների կառուցման հնարավորությունները և կոնկրետ աշխատանքների իրականացման եղանակները: 1977թ. կառավարության որոշմամբ այս երկու նախագծերը միացան և կոչվեցին «Հարավարևելյան անատոլիական նախագիծ»[11]: Նախագիծն ընդգրկում է Եփրատի ու Տիգրիսի հարավային հոսանքների միջև ընկած տարածքները՝ ներառելով 12 ենթանախագծեր (Աշաղի Ֆըրատ, Սընըր Ֆըրատ, Սուրիչ–Վազիկի, Ադըյաման–Քյախտա, Գազիանթեփ–Արաբան, Դիջլե–Կրալ Կըզը, Բատման–Սիլվան, Գաբզան, Իլիսու, Ջիզրե)[12]: Ռեգիոնալ առումով այն ընդգրկում էր հետևյալ վիլայեթները՝ Ադըյաման, Բատման, Դիարբեքիր, Գազիանթեպ, Քըլիս, Մարդին, Սըղրդ և Սըրմեկ: Նախագծով նախատեսվում էր մինչև 2005 թ. կառուցել 22 ամբարտակներից բաղկացած մի համակարգ, որը մեծացնելու էր ոռոգելի տարածքները, միաժամանակ ավելացնելով էլեկտրաէներգիայի արտադրությունը: Նախագծի ինժեներներից Օլչայ Ունվերի կարծիքով՝ նախագծի շինարարական աշխատանքների ավարտից հետո կստեղծվեին լրացուցիչ 3,5 մլն աշխատատեղեր, քառապատկելով այս տարածքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը[13]: Ի հավելումն ոռոգման և էներգետիկ ծրագրերի՝ ՀԱԱՆ–ը ներառում է նաև տարածաշրջանում արդյունաբերության, տրանսպորտի, հանքահանության, հեռուստահաղորդակցության, առողջապահության, կրթության զբոսաշրջիկության և ենթակառույցների զարգացման ծրագրեր: 80–ականների ընթացքում նախագիծը դարձավ սոցիալ–տնտեսական բնույթի բազմաճյուղային տարածաշրջանային ծրագիր. ՀԱԱՆ–ի իրականացմամբ նպատակ էր հետապնդվում.

ա. զարգացնել տարածաշրջանի բոլոր հողային և ջրային պաշարները տնտեսության և բարեկեցության մակարդակը բարձրացնելու համար.

բ. հարթեցնել Թուրքիայի այս և մյուս շրջանների միջև եղած անհավասարություններն արտադրության և բարեկեցության մակարդակի բարձրացմամբ.

գ. բարձրացնել տարածաշրջանի արդյունավետության և աշխատունակության մակարդակը.

դ. բավարարել բնակչության արագ աճի և ուրբանիզացիայի հետևանքով ենթակառույցների նկատմամբ աճող պահանջարկը.

դ. գյուղական շրջաններում կազմակերպել տնտեսական և ֆիզիկական ենթակառույցներ և այդ ճանապարհով ուղղորդել քաղաքային բնակչության աճը ցանկալի ուղղությամբ.

ե. նպաստել տնտեսական աճի ազգային խնդիրների լուծմանը, արտահանման խրախուսմանը և տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը[14]:

1989 թ. նոյեմբերի 6–ին No. 20334 օրենքով ստեղծվեց ՀԱԱՆ–ի Տարածաշրջանային զարգացման կազմակերպությունը և ՀԱԱՆ Բարձրագույն խորհուրդը, որը բարձրագույն որոշում կայացնող մարմինն էր և պատասխանատու էր բոլոր ծրագրերի, նախագծերի և պլանների հետազոտման և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Այս խորհուրդը գլխավորում էր Թուրքիայի պետական նախարարը[15]:

Նախագծի իրագործման համար ծրագրված է հատկացնել 32 մլրդ դոլար, որից 11 մլրդ 1995թ–ին արդեն ծախսվել էր: Նախագծի հեղինակների հաշվումով արհեստական ոռոգման օբյեկտները հնարավորություն կընձեռեն 2–3 անգամ բերքահավաք կատարել, ինչը կքառապատկի բամբակի և հացահատիկային կուլտուրաների արտադրությունը և կարտադրվի երկրում մինչ այդ արտադրվող էներգիայի մեկ երրորդի չափ էլեկտրաէներգիա[16]: Եփրատի վրա կառուցված առաջին ամբարտակը Քեբանն էր, որի կառուցումն սկսվեց 1974 թ.: Հաջորդը Կարակայան էր՝ 500մլն դոլար արժողությամբ: Նախագծի գլխավոր և ամենամեծ կառույցը Աթաթյուրքի ամբարտակն է, որի շինարարական աշխատանքները պաշտոնապես սկսվեցին 1983 թ. նոյեմբերի 3–ին և ավարտվեց 1992 թ. ամռանը: Աշխարհի ներկա յոթ հրաշալիքների շարքը դասված այս կառույցը Մերձավոր և Միջին Արևելքում նմանատիպ կառույցներից ամենախոշորն է[17]. Ամբարտակի բարձրությամբ (184 մ) այս տեսակի կառույցներից աշխարհում ութերորդն է, իսկ արհեստական ջրամբարի տարողությամբ՝ տասնհինգերորդը: Տարեկան ՀԷԿ–ը տալիս էր 8,1 մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա[18]: Աթաթյուրքի ամբարտակի և Ուրֆայի թունելի կառուցմամբ հնարավոր էր դառնում ամբողջ Խառռանի հովտի ոռոգումը՝ ոռոգվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմելով 1,7 մլն հա[19]:

Բացի զուտ տնտեսական գործառնություններից, ՀԱԱՀ–ը ունի նաև ռազմական և պաշտպանական նպատակներ: Այսպես՝ թուրքական Գլխավոր սպայակույտի զեկույցներից մեկում նշվում է, որ ՀԱԱՀ–ը կարող է կանխել սիրիական կողմից հնարավոր զրահատանկային հարձակումը: Հարյուրավոր արհեստական ջրամբարներն ու ջրանցքները, ողողելով հսկայական տարածքներ, անհնար կդարձնեն սիրիական առաջխա-

ղացումը՝ հնարավորություն տալով օգտագործել թուրքական օդուժի առավելությունները[20]:

ՀԱԱՀ–ի կառուցումը բացասաբար է անդրադառնում Թուրքիայի հարավային հարևանների ոռոգման ջրի պաշարների կուտակման և գյուղատնտեսության վրա: Բավական է ասել, որ ծրագրի վերջնական իրագործման հետևանքով Եփրատ և Տիգրիս գետերի հոսքը կրճատվելու է 80 տոկոսով: 1987 թ. Թուրքիայի և Սիրիայի միջև կնքվել էր արձանագրություն, համաձայն որի՝ Թուրքիան պարտավորվում էր ապահովել Եփրատի 500 խմ/վրկ ջրի հոսքը դեպի հարավ: Սակայն պարբերաբար երկու կողմերը մեղադրում են մեկը մյուսին ստորագրված համաձայնագիրը խախտելու մեջ: 1996 թ. սկզբներին Ծոցի համագործակցության երկրների (այս կազմակերպությունը ներառում է Սաուդյան Արաբիան, Օմանը, Կատարը, Քուվեյթը, Բահրեյնը և ԱՄԷ) Դամասկոսում կայացած հանդիպման ժամանակ ընդունված հռչակագրում քննադատվում էր Թուրքիայի քաղաքականությունը ջրային ռեսուրսների բաշխման ոլորտում, մասնավորապես ՀԱԱՀ–ի համակարգում նոր ջրամբարների կառուցումը սիրիա–թուրքական սահմանագծի մոտ[21]:

ՀԱԱՀ–ի վերջնական իրագործման դեպքում կրճատվելու է Իրաքի ջրի պաշարների 90 տոկոսը, Սիրիայի 40 տոկոսը: 1990 թ. սկզբներին 30 օրով դադարեցվեց Եփրատի ջրերի հոսքը հարավ՝ Աթաթյուրքի ջրամբարը լցնելու համար: 1992 թ. հուլիսին այս ջրամբարի բացման արարողության ժամանակ վարչապետ Ս. Դեմիրելը հայտարարեց, որ «... Թուրքիան իրավունք ունի իր ջրերն օգտագործել այնպես, ինչպես ցանկանում է»:[22]

1990–ական թվականների սկզբներին ընդդիմադիր կուսակցություններից Ժողովրդա–Հանրապետական Ձախ կուսակցության առաջնորդ Բյուլենտ Էջևիթը, հաստատելով ՀԱԱՀ–ի կարևորությունը, այդուհանդերձ գտնում էր, որ «քանի դեռ վերջ չի տրվել հողի անհավասար հատկացման քաղաքականությանը, խոսք անգամ չի կարող լինել Թուրքիայի արևելքում սոցիալական ոլորտում առկա խնդիրների լուծման մասին: Երբ կսկսվի Խառոանի հովտի ոռոգումը Աթաթյուրքի ամբարտակի մոտակայքում, եկամուտները կբարձրանան ամենաքիչը 15 անգամ: Սակայն եթե չիրականացվի հողային բարեփոխումը, ապա սոցիալական անհավասարությունն էլ ավելի կսրվի»:[23]

1980–ականների վերջերին, չնայած նախորդ տասնամյակներում ձեռնարկված արմատական քայլերին, Թուրքիայի արդյունաբերական հզորության տարաբաշխումը շարունակում էր մնալ անհավասարաչափ:

ՕԳՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Турецкая Республика, М., 1975, стр. 225.
2. "Milliyet" 01.10. 1980.
3. Dördüncü bes yillik kalkinma plani, 1979–1983, Ankara 1979, S. 75–76.
4. Н.В. Кома. Проблема преодоления социально — экономической отсталости востока Турции в программных установках буржуазных политических партии, Тбилиси 1985, с 51.
5. "Правда" 21.12.1983.
6. Н.В. Кома. Некоторые аспекты деятельности буржуазных партий Турции по преодолению отсталости восточных районов страны, в кн. "Турция: история и современность", М., 1988, 246.
7. Н.В. Кома. Проблема преодоления социально — экономической отсталости востока Турции..., стр. 56.
8. Նույն տեղում, էջ 72–73:
9. А. А. Исаев, А. Х. Керимов. Новые подходы к проблеме преодоления неравномерности внутрирегионального развития, стр, 219.
10. Նույն տեղում, էջ 214–215:
11. Նյութը վերցված է «Ինտերնետ» ցանցում ՀԱԱՆ–ին նվիրված էջից, տես <www.gap.gov.tr>
12. Н. В. Кома, նշվ. աշխատ., էջ 69:
13. "The Economist", June 08.06. 1996.
14. Sandra Akmansoy Southeastern Anatolia Project, The University of Texas at at Austin Department of Civil Engineering, December 6, 1996.
15. "Resmi gazete", 06. 11. 1989.
16. А. Еров. Гидроузел на Ефрате, "Азия и Африка сегодня", 1995, No. 4. стр. 30.
17. "Time" 01. 24. 1994.
18. Н. В. Кома, նշվ. աշխատ., էջ 69:
19. Husnu Dogan New Impetus for Agriculture, "Turkish Review", Summer No. 2, 1987, p. 9.
20. Al. J. Venter The Oldest Threat: Water in the Middle East , "Middle East Policy", Vol. VI, No. 1, June 1998, p. 129.
21. "Hürriyet" 30. 12. 1995.
22. G. Kemp and R. Harkavi Strategic Geography and the Changing Middle East, Harrisonburg, 1997, p. 25, 105: Ջրի խնդրի շուրջ սիրիա–թուրքական հակասությունների մասին ավելի մանրամասն տե՛ս նաև Kurt D. Volkan Ankara Pools Its Resources, "Middle East Insight", 1996 May–August, vol. XI. no. 4–5, pp. 54–57. Ё Ibrahim Hamidi Water Rights and Wrongs, pp. 58–61.
23. А. Еров, նշված աշխատ., էջ 31:
24. А. А. Исаев, А. Х. Керимов., նշված աշխատ., 230: